ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/49 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների (ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի Բարձրաքաշի Սբ Գրիգոր վանական համալիրի կառույցների, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի «Բերդկունք» ամրոցի և կից կառույցների, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի Օրբելյանների քարավանատան (Սելիմի) և ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Բագարան բնակավայրի Շուշանավանքի նորոգման, ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.07.2023թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաճողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
	Սուրեն Շաքարյան /գնահատող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
	Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/49** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/49** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ	vasart-llc@list.ru
2	«Հարսնաձոր» ՍՊԸ	harsnadzor@yandex.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ		«Հարսնաձոր» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	12962960	-	-	-	-
2	12000000	9400000	9400000	10000000	12000000
3	9960000	7800000	7800000	8300000	9960000
4	8046000	8040000	8040000	6705000	8000046

5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, 2023թ հուլիսի 13-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 13.07.2023թ. ժամը 11:00-ին

6. Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 Ընթացակարգի մասնակից **«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ-ի** և **«Հարսնաձոր» ՍՊԸ-ի** հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 «ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.3 «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

6.3.1 Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, լրացված է թերի և ձևաչափին ոչ համապատասխան:

6.3.2 Հայտով ներկայացրած՝ որպես **«Մասնագիտական փորձառություն»** որակավորման չափանիշը հիմնավորող 08.09.2017թ կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱ-ԱՇՁԲ-17/1 և 25.06.2018թ. N 2 պայմանագրերը չեն կարող համարվել նմանատիպ, քանի որ չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին: Ինչ վերաբերում է 20.05.2020թ կնքված N 1 պայմանագրի շրջանակներում 05.10.2021թ կնքված N 1 փոփոխման ակտին, ապա այն ներկայացված է թերի, քանի որ բացակայում են N 1 պայմանագիրը և տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճեները կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը և վերջինիս շրջանակներում մատուցված ծառայության ծավալը՝ գումարային արտահայտությամբ չի համապատասխանում հրավերի պայմաններին:

6.3.3 Մասնակցի գնային առաջարկը 4-րդ չափաբաժնի մասով չի համապատասխանում հրավերի պայմաններին՝ ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գինը սյունակներում տառերով և թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն: Բացի այդ, արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին: Գնային առաջարկը 4-րդ չափաբաժնի մասով ենթակա չէ շտկման:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Հարսնաձոր» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.3.1 և 6.3.2 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2023թ հուլիսի 17-ին, ժամը 15:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 17.07.2023թ. ժամը 15:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 ««**Հարսնաձոր» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում շտկել է հանձնաժողովի կողմից 6.3.1 և 6.3.2 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Տվյալներ ընտրված, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

2-րդ չափաբաժնի մասով՝
1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել **«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ**-ին:
2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Հարսնաձոր» ՍՊԸ-ին**:

3-րդ չափաբաժնի մասով՝
1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել **«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ**-ին:
2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Հարսնաձոր» ՍՊԸ-ին**:

4-րդ չափաբաժնի մասով՝
1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել **«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 6.3.3 կետը՝ 4-րդ չափաբաժնի մասով մերժել **«Հարսնաձոր» ՍՊԸ-ի** հայտը՝ մասնակցի գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հաստատել 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ գնման գործընթացը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, ոչ մի հայտ չի ներկայացվել հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Հովսեփյան /նախագահ/

_____ Լուսինե Իգիթյան

_____ Սուրեն Շաքարյան

_____ Արմինե Ստեփանյան

_____ Վերգինե Սահակյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/